է պահպանվի մինչև սույն դատական ակտի կատարումը, միևնույն ժամանակ այն կարող է վերացվել հայցի ապահովում պահանջած անձի միջնորդությամբ:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 17-րդ, 109-րդ, 179-րդ, 188-189-րդ, 191-192-րդ, 234.12-րդ և 360-րդ, 362-363-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Արթին Էնթրփրայս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցը բավարարել մասնակի.

1.1. Անվավեր ճանաչել թիվ ԵՔ-ԲՄԾՁԲ-22/27 ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումը:

1.2. Մնացած մասով՝ պահանջը մերժել:

2. ՀՀ Երևանի քաղաքապետարանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 30,000 ՀՀ դրամ՝ որպես 21.07.2023թ. որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

2.1. «Արթին Էնթրփրայս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 1,589,970 (մեկ միլիոն հինգ հարյուր ութսունինը հազար ինը հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ, որպես 21.07.2023թ. որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Դատարանի՝ 21.07.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերից որևէ մեկի վրա հասնելը:

4. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ՄՈՒՇԵՂՅԱՆ**